ծոյքն, զաւակներն ու ծառաներն նոյն վարուց սրբութեան մէջ պահեն, յարաւմ՝ քրիստոնեայք կը պահպանէին։ Ուստի ամուրի եկեղեցականաց մենաստանները գիտած ժամանակ՝ ամուսնացելոց ընտանեկան կենաց խորքն եւս թափանցելու և զննելու է։ Եւ երբ այս անաչառ զննութիւնն անենք, պիտի տեսնենք ամենքս, որ յանգանքն, ոչ թէ ամուսնական կամ ամուրիական դրութեան մէջ է, այլ մարդոյ մէջ է. մարդն է զոր պէտք է սրբել. մարդն է, զոր պէտք է Աւետարանի հոգւով վերանորոգել. մարդն է, որ իւր կոչումն կը փառաւորէ թէ՛ յամուսնութեան և թէ՛ յամուրիութեան։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Բեթլեհէմի Հայ օրիորդ մի, նշանուած լինելով մի Յոյն երիտասարդի հետ, երբ եկեղեցին կը տարուի պսակուելու համար, Յունաց վանուց Տեառն Մետրապոլիտն կը յայտնէ թէ՝ նախ պէտք է մկրտուի օրիորդն և ապա Պսակի Խորհուրդն կատարուի։ Մետրապոլիտի այն յայտարարութեան և յամառութեան վերայ ծնողք եւ ազգականք կը զայրանան և օրիորդն եկեղեցիէն հանելով՝ խուռն բազմութեան մէջէն կ՚առնուն եւ տուն կը բերեն՝ Յոյն երիտասարդի հետ չամուսնացնելու պայմանաւ։ Երիտասարդի ծնողքն եւ ազգականքն միջնորդ կը ձգեն եւ կ՚առաջարկեն որ ամուսնութեան Խորհուրդն Հայոց եկեղեցւոյն մէջ կատարուի։

Ու այս առաջարկութեան Ս. Աթոռոյս Վարչութեան կողմէն՝ օրինաւոր երաշխաւորութիւն առնուլ, յետ պըսակման հարսն վերստին չը մկրտելու պայմանաւ։

Երաշխաւորութիւնն առնուեցաւ, երիտասարդի ծնողաց տունն գրաւդրուեցաւ վաւերական գաշնագրով եւ Պսակի Խորհուրդն կատարուեցաւ մեր Եկեղեցւոյն մէջ։

— Ոսկէմէջի Արաբ երիտասարդ մի իւր քրոջ հետ մեղական յարաբերութիւն ունեցող Դատաւորն (Մզլըմ) սպաննելուն համար, հրամանաւ Տէրութեան գլխատեցաւ քաղաքիս մէջ. քանզի դատաւորի մերձաւորքն չը հաճեցան արենագին առնելով՝ ազատ թողուլ նոյն երիտասարդն։

— Հրէայք օր աւուր բազմանալու և յառաջ երթալու վերայ են Պաղեստինի մէջ։ Մեծամեծ շինութեանց ձեռնարկած են և մի քանի տարուան մէջ բաւականին շէնքեր յառաջ բերած են։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

՛ՆԱՐԵԿ ՓՈՔՐԱԴԻՐ, մաքուր տպագրութեամբ և վայելուչ կազմով։

Գին 12 ղահեկան։

ԱՒԵՏԱՐԱՆ ՓՈՔՐԱԴԻՐ, ընտիր օրինակաց բաղդատութեամբ տպագրեալ, վայելուչ կազմով։

Գին 8 ղահեկան։

Սուրբ Աթոռոյս տպարանէն ՚ի լոյս ընծայուած գրեանքն գլխաւորապէս կը ծախուին ՚ի գրավաճառանոցի Ս. Աթոռոյս, և ՚ի Փոխանորդատան Երուսաղէմի ՚ի Կ. Պօլիս։

digitised by A.R.A.R.@